



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ

11.09/5489
16.12.10

« ___ » _____ 2010 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ
ՏԻԿԻՆ Հ. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ

Հարգելի նախարար

Կրկին անդրադառնալով հայ մեծանուն նկարիչ Մինաս Ավետիսյանի ստեղծագործական ժառանգության պահպանման խնդրին, Գյումրու քաղաքապետարանը հավատարիմ մնալով իր կողմից որդեգրած պատմամշակութային ժառանգության պահպանման քաղաքականությանը համայնքի 2011 թվականի բյուջեով նախատեսում է անհրաժեշտ ֆինանսավորում՝ Մ. Ավետիսյանի որմնանկարները ոչնչացումից փրկելու և այն քաղաքի նշանակալից հասարակական շենքերի, մասնավորապես քաղաքապետարանի, ներսույթում տեղադրելու համար:

Սակայն քաղաքում չկան բարձրակարգ մասնագետներ, որի պատճառով քաղաքապետարանը չի կարող ինքնուրույն իրականացնել որմնանկարների վերականգնման և տեղափոխման աշխատանքները:

Խնդրում ենք զորավիզ կանգնել և աջակցել մեր ծրագրերի իրականացման գործում՝ տրամադրելով համապատասխան մասնագետներ, որոնք օգտագործելով նորագույն տեխնոլոգիաներ, կկարողանան գործնականորեն և մասնագիտական բարձր մակարդակով իրականացնել որմնանկարների տեղափոխման և վերականգնման աշխատանքները:

Հարգանք՝

ԳՅՈՒՄՐՈՒ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ